ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
«ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

Медицинский Центр "Норк-Мараш"
Армения, г. Ереван, Норк,
ул. А. Арменакяна 108/4
Тел: (+37410) 65 09 71; 65 09 61
Факс: (+37410) 65 38 69
или 65 05 60

ՀՀ, ք. Երևան, Նորք
Ա. Արմենակյան 108/4
Հեռ. (+37410) 65 09 71; 65 09 61
Ֆաքս (+374 10) 65 38 69
կամ 65 05 60

"Nork-Marash" Medical Center
Armenakian str. 108/4
Yerevan 0047, Armenia
Phone: (+37410) 65 38 69
Fax: (+37410) 65 38 69, 65 05 60
E-mail: heart@nmmc.am

ք. Երևան

17.07.2024թ.

«Միփեյ» ՍՊԸ-ի տնօրեն
Արթուր Եղիազարյանին
(ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան պ., 53/66 շ.)
էլ. փոստ՝ thtllctender@gmail.com

Ծանուցում

(թիվ <<ՆՄԲԿ-ԳՀԾՁԲ-24/23>> ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին)

<<Նորք-Մարաշ>> բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ն վճարային տերմինալով վճարների հավաքագրման ծառայությունների ձեռքբերման նպատակով 18.12.2023 թվականին գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հայտարարել է <<ՆՄԲԿ-ԳՀԾՁԲ-24/23>> ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի արդյունքում 2024 թվականի հունվարի 1-ին <<Նորք-Մարաշ>> բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի /այսուհետ նաև՝ Պատվիրատու/ և <<Միպեյ>> ՍՊ ընկերության /այսուհետ նաև՝ Ընկերություն կամ Կատարող/ միջև կնքվել է վճարային տերմինալով վճարների հավաքագրման ծառայությունների մատուցման N <<ՆՄԲԿ-ԳՀԾՁԲ-24/23>> ծածկագրով պայմանագիրը /այսուհետ՝ նաև Պայմանագիր/:

Պայմանագրի թիվ 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցի համաձայն՝ պայմանագրով սահմանված ծառայության համար ֆինանսական միջոցները նախատեսված չեն: Ֆինանսական միջոցները հատկացվում են բժշկական կենտրոնի կողմից մատուցված ծառայությունների դիմաց վճարային տերմինալ մուտքագրվելիք գումարներից, ընդ որում վճարումն իրականացվելու է ծառայություններն ընդունելու դեպքում յուրաքանչյուր ամսվա համար մինչև հաջորդ ամսվա 15-ը:

Պայմանագրի 7.15-րդ կետի համաձայն՝ նույն պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումը իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ծառայությունների մատակարարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

Պատվիրատուն համաձայնագիր կնքելու նպատակով 30.05.2023թ.-ին norq-marash-gnumner@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեից Կատարողի thtllctender@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկել է համաձայնագիր կնքելու մասին ծանուցում:

Վերոնշյալ ծանուցմամբ Կատարողին հայտնել ենք, որ Պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսված են, ուստի պայմանագրի կողմը համաձայնագիրը պետք է կնքի համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում, հակառակ դեպքում պայմանագիրը միակողմանիորեն կլուծվի:

Կատարողը, ծանուցմամբ նշված ժամկետում, Գնորդին չի ներկայացվել կնքված համաձայնագրի օրինակները, ինչպես նաև որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները:

Պայմանագրի 7.11-րդ կետի համաձայն՝ Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատա¬րելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Ելնելով վերոգրյալից՝ ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կատարողը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, այն է՝ սահմանված ժամկետում չի ներկայացրել կնքված համաձայնագիրը, <<Նորք-Մարաշ>> ԲԿ>> ՓԲԸ-ն որոշեց՝ միակողմանի հրաժարվել 16.01.2024 թվականին կնքված <<ՆՄԲԿ-ԳՀԾՁԲ-24/23>> ծածկագրով պետական գնման պայմանագրից՝ համարելով այն միակողմանի լուծված, իսկ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կիրառել ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով և Պայմանագրի 7.11-րդ կետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝

- լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը (1150001612200100 հաշվեհամարին), ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.

- մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ՝ Մ. ՅՈՒ. ԱԴԱՄՅԱՆ